

**ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՄ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Ուրախութեամբ կը հաղորդենք, որ Փետրուար 23ին, Հալիվուտի մէջ գործող ԹՄՄ Արշակ Տիգրանեան Վարժարանի աւարտական դասարանի ուսանողները՝ գլխաւորութեամբ Տնօրէն Պրն. Վարդգէս Գուրուեանի եւ դասատուի, այցելեցին Առաջնորդարան եւ սիրով դամաւորուեցան Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Արովեանի կողմէ եւ շրջագայեցան Առաջնորդանիստ Մայր Տաճարի կառուցման վայրին մէջ: Տէր Հայրը անոնց տուաւ անհրաժեշտ տեղեկութիւններն ու բացատրութիւնները:

Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը, ուր Տէր Հայրը պատասխանեց աշակերտներու հարցումներուն եւ ունեցած մտահոգութիւններու մասին: Ապա Առաջնորդ Սրբազան Հայրը եւս միացաւ անոնց, ուր քննարկուեցան Երիտասարդները յուզող կարգ մը խնդիրներ, փափաքելով գիտնալ, թէ եկեղեցին ի՞նչ ձեւով կրնար ուղղութիւն տալ եւ գոհացնել անոնց ակնկալութիւնները: Սրբազան Հայրը իր հարուստ փորձառութեամբ ընկերային ձեւով անոնց խօսեցաւ եւ տուաւ անհրաժեշտ ուղղութիւնները՝ յայտնելով եկեղեցւոյ կարելոր դերը մեր Երիտասարդներու առողջ եւ օրինակելի դաստիարակութեան վերաբերեալ:

Պրն. Տնօրէնը իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ ժամանակ տրամադրելով մօտէն կը հետաքրքրուէր Տիգրանեան Վարժարանով եւ աշակերտներուն կու տար իր հոգեւոր պատգամները եւ խրատները: